

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քննարկի Միոգոյան

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

Արաբագիտություն

Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ)10-21

Մերի Չիլիսիյան

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....22-29

Հարություն Մայժևոյան

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ.....40-46

Համիկ Երիցյան

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

Թյուրքագիտություն

Վարուժան Գեղամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

Մարիամ Մեղրոնյան

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ..... 72-86

Ռաֆիկ Խաչատրյան

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ..... 87-98

Գառնիկ Դավթյան

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴԻԲԵՉԱՆՈՒՄ..... 99-105

Թամարա Աղանայան

ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.)..... 106-117

Իրանագիտություն

Լիանա Պետրոսյան

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 118-123

Անի Նահապետյան

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ..... 124-140

Նարե Գևորգյան

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՉԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... 141-152

Յասեր Քարամզադե Հաֆթխանի

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ..... 153-160

CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
---	------

Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
--	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
---	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
---	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--	-------

Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

Iranian Studies

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE"	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

**ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱԲԲԱՐ ՀԱՇԵՄԻ
ՌԱՖՅԱՆՉԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր՝ Իրան, Իսլամական հեղափոխություն, Փորձագետների խորհուրդ, Հաշեմի Ռաֆսանջանի, Ալի Խամենեի

1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո Իրանում հաստատվեց նոր սահմանադրություն, որը իրենից ենթադրում էր նաև քաղաքական վարչակարգի փոփոխություն: Իրանը անցում կատարեց պետական կառավարման հանրապետական ձևի՝ երկրում հաստատվեցին ժողովրդավարական կարգեր: Իսլամական այս նոր պետությունը յուրօրինակ էր այնքանով, որ այստեղ պետական կառավարման հանրապետական ձևը միահյուսվեց իսլամական գաղափարներին և օրենքներին: Մինչ օրս էլ բարդ է հստակ բնութագրում տալ պետական կառավարման այն ձևին, որը գործում է Իրանի Իսլամական Հանրապետությունում, քանի որ այստեղ կրոնապետական և ժողովրդավարական կարգերը հանդես են գալիս միահյուսված:

Իրանի պետական քաղաքական ապարատում ամենաառանցքային նշանակություն ունեցող խորհուրդը Փորձագետների խորհուրդն է (Māǧlis-i hūbrigan i rāhbārī), որին վերապահված է ընտրել երկրի գերագույն հոգևոր առաջնորդին: 1979 թ. Սահմանադրության մեջ նշվում էր, որ հոգևոր առաջնորդը կարող է ընտրվել կա՛մ համապետական ընտրությունների միջոցով, կա՛մ Փորձագետների խորհրդի կողմից, բայց 1989 թ. Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում հստակեցվեց, որ գերագույն հոգևոր առաջնորդին իրավասու է ընտրել միայն Փորձագետների խորհուրդը՝ հիմնվելով Սահմանադրության 107-րդ և 108-րդ հոդվածների վրա: Եթե հոգևոր Առաջնորդն ի վիճակի չէ կատարել Սահմանադրությամբ ամրագրված իր պարտավորությունները, կամ այլևս չի համապատասխանում Սահմանադրության 5-րդ և 109-րդ հոդվածներում նշված պահանջներից որևէ մեկին, կամ եթե բացահայտվում է, որ նա ի սկզբանե չի համապատասխանել սահմանված պահանջներին՝ ապա

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ n-gevorgyan97@mail.ru

նա ազատվում է իր զբաղեցրած պաշտոնից: Սույն հարցի վերաբերյալ որոշում կայացնում են փորձագետները՝ համաձայն 108-րդ հոդվածի²: Հոգևոր առաջնորդի մահվան, հրաժարականի կամ իշխանությունից նրան հեռացնելու դեպքում փորձագետները պարտավոր են հնարավորինս շուտ նոր թեկնածու ընտրել և նշանակել Հոգևոր առաջնորդի պաշտոնին: Մինչ նոր հոգևոր առաջնորդի նշանակումը՝ Նպատակահարմարության խորհրդի³ որոշմամբ երկրի Հոգևոր առաջնորդի բոլոր պարտավորությունները ժամանակավորապես պետք է իրականացնի խորհուրդը, որի կազմում ընդգրկվում են հանրապետության նախագահը, դատական իշխանության ղեկավարը և Սահմանադրության պահապանների խորհրդի ֆիլիհներից որևէ մեկը: Եթե այս ընթացքում վերոնշյալ անձանցից որևէ մեկն ի վիճակի չլինի որևէ պատճառով կատարել իր պարտավորությունները, նրա փոխարեն Նպատակահարմարության խորհրդի ընտրությամբ ֆիլիհների մեծամասնության որոշմամբ այլ անձ կնշանակվի: Սույն խորհուրդը կարող է իրականացնել 110-րդ հոդվածի 1, 3, 5 և 10-րդ կետերով և 6-րդ մասի «դ», «ե» և «զ» կետերով նախատեսված գործառույթները՝ Նպատակահարմարության խորհրդի անդամների ընդհանուր թվի երեք քառորդի ձայների որոշմամբ⁴: Եթե հիվանդության կամ այլ պատահարի պատճառով Առաջնորդը ժամանակավորապես չի կարող իրականացնել իր պարտավորությունները, ապա այդ ընթացքում նրան փոխարինում է սույն հոդվածում նշված խորհուրդը:

Փորձագետների խորհուրդը, բացի հոգևոր առաջնորդ ընտրելուց, կատարում է նաև մեկ այլ գործառույթ՝ մասնակցում է Սահմանադրության վերանայման գործընթացին⁵: Սահմանադրության վերանայման խորհրդում ի թիվս այլ

² Matn-e qāmel-e qānuni-ye asāsi-ye ġomhūrī-ye Eslāmī-ye Īrān hamrāh-e bā ešlāhāt-e sāl-e 1368, Ašl-i 108 (ԻԻՀ սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989թ. Փոփոխություններով, 108-րդ հոդված), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf, (հասանելի է՝ 30.05.2019):

³ Խորհրդակցական մարմին, որին վերապահված է հարթել Սահմանադրության պահապանների խորհրդի և Խորհրդարանի միջև առաջացած վեճերը:

⁴ Mātn-i Kāmil-i Qanūn-i Asāsi-i Ğomhūrī-yi Islam-i Īrān Hāmrah ba Işlahat-i Sal-i 1368, Aşl-i 110, (ԻԻՀ սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989թ. Փոփոխություններով, 110-րդ հոդված), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf, (հասանելի է՝ 30.05.2019):

⁵ Mātn-i Kāmil-i Qanūn-i Asāsi-i Ğomhūrī-yi Islam-i Īrān Hāmrah ba Işlahat-i Sal-i 1368, Aşl-i 177, (ԻԻՀ սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989թ. Փոփոխություններով, 177-րդ հոդված), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf, (հասանելի է՝ 30.05.2019):

գերատեսչությունների (Սահմանադրության պահապանների խորհրդի անդամները, իշխանության երեք ճյուղերի ղեկավարները, Նպատակահարմարության խորհրդի մշտական անդամները, Առաջնորդի կողմից ընտրված տասը ներկայացուցիչ, Նախարարների խորհրդի երեք ներկայացուցիչ, դատական իշխանության երեք ներկայացուցիչ, Իսլամական խորհրդատվական խորհրդի տասը ներկայացուցիչ, համալսարանների դասախոսական կազմը ներկայացնող երեք դասախոս) ներառվում են նաև Փորձագետների խորհրդի 5 անդամներ⁶:

Այսպիսով, Փորձագետների խորհուրդի ընդունած որոշումները բավականին մեծ ու լայն ազդեցություն են ունենում ԻԻՀ պետական կառավարման համակարգի վրա:

Առավել հստակեցնելու համար Փորձագետների խորհրդի ունեցած կարևորությունը Հոգևոր առաջնորդի ընտրության հարցում, պետք է հասկանալ այս երկու պետական ինստիտուտների միջև գոյություն ունեցող փոխազդեցությունները: Առաջին հայացքից թվում է, թե Հոգևոր առաջնորդը որևէ ազդեցություն չի կարող ունենալ այս խորհրդի վրա, բայց փորձագետների խորհուրդը ընտրվում է համաժողովրդական քվեարկության միջոցով, իսկ ընտրություններն ու ընտրություններում առաջադրված թեկնածուները, ըստ Սահմանադրության 99-րդ հոդվածի՝ վերահսկվում են Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից, որի 12 անդամներից 6-ը ընտրվում են Հոգևոր առաջնորդի կողմից, իսկ մյուս 6-ը՝ նրա համաձայնությամբ⁷: Հաշվի առնելով այս նրբությունները, կարելի է եզրակացնել, որ Փորձագետների խորհրդի անդամների վրա մեծ է Հոգևոր Առաջնորդի ազդեցությունը, իսկ վերջինս էլ շատ դեպքերում օգտագործում է այս կառույցի ունեցած կախվածությունն իրենից : Այնուամենայնիվ, նման պարագայում պետք է հիշել, որ, ի սկզբանե, ԻԻՀ-ն հակասություններ ունեցող պետական կառավարման համակարգ ունի, որում պահպանվում է կառավարման հիերարխիկ ձևը, բայց, իրականում, պետական կառավարման բոլոր մարմինները

⁶ Mātn-i Kamil-i Qanūn-i Asasī-i Ğumhūrī-yi Islam-i Īran Hāmrah ba Işlahat-i Sal-i 1368, Aşl-i 108, (ԻԻՀ սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989թ. Փոփոխություններով, 108-րդ հոդված), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf, (հասանելի է՝ 30.05.2019):

⁷ Mātn-i Kamil-i Qanūn-i Asasī-i Ğumhūrī-yi Islam-i Īran Hāmrah ba Işlahat-i Sal-i 1368, Aşl-i 99, (ԻԻՀ սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989թ. Փոփոխություններով, 99-րդ հոդված), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf, (հասանելի է՝ 30.05.2019):

մեծ կախում ունեն միայն մեկ օղակից, որն էլ հոգևոր առաջնորդի ինստիտուտն է:

Փորձագետների խորհուրդը իր գործունեության ամբողջ ընթացքում կայացրել է երկու կարևոր որոշում, որոնցից առաջինը 1985 թ. Հոսեյն Ալի Մոնթազերիին ԻԻՀ հիմնադիր իմամ Խոմեյնիի փոխանորդ նշանակելն էր, բայց 1989 թ. ներքաղաքական զարգացումների արդյունքում, երբ Հ. Մոնթազերին դուրս եկավ իշխանության դեմ և սկսեց քննադատել կառավարության որդեգրած քաղաքականությունը քաղբանտարկյալների և մահապատիժների վերաբերյալ, Փորձագետների խորհուրդը նրան հեռացրեց պաշտոնից, և նույն տարում, Ալի Խամենեին նշանակեց նոր գերագույն առաջնորդ⁸: Նոր առաջնորդի ընտրության նիստը դնփակ էր, և միայն վերջերս՝ 2018 թ. համացանցում է հայտնվում այդ նիստի տեսագրությունը, որը մեծ քննարկումների տեղիք է տալիս⁹: Նիստը վարում էր հանրապետության նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին (1989-1997 թթ.), որը ընտրության էր դնում Ալի Խամենեիի թեկնածությունը: Ա. Խամենեին իր ելույթի ժամանակ նշում է, որը ինքը արժանի չէ այդ պաշտոնի և չգիտի, արդյոք կկարողանա արդյունավետ կատարել իր առջև դրված պարտավորությունները¹⁰: Այնուամենայնիվ, Հ. Ռաֆսանջանիի պնդմամբ և Փորձագետների խորհրդի մյուս անդամների համաձայնությամբ, Ա. Խամենեին նշանակվեց Իրանի Իսլամական Հանրապետության Հոգևոր առաջնորդ: Թե ինչն էր Հ. Ռաֆսանջանիին դրդել նման քայլի գնալ, իհարկե, անհայտ է, բայց որոշակի ենթադրություններ կարելի է անել: Մասնավորապես, ենթադրվում էր, որ Ա. Խամենեին, այսպես ասած, «հեշտ կառավարելի» քաղաքական առաջնորդ կլիներ, ինչը թույլ կտար Հ. Ռաֆսանջանիին երկրի դեկր վերցնել իր ձեռքը և հետագայում հող նախապատրաստեր իր՝ գերագույն հոգևոր առաջնորդ դառնալու համար: Բայց փաստը այն է, որ հիմա Հ. Ռաֆսանջանիից մնացել են միայն հիշողություններ, իսկ Ա. Խամենեին դեռևս շարունակում է մնալ ԻԻՀ գերագույն հոգևոր առաջնորդը, ով բավականին ազդեցիկ քաղաքական լծակներ ունի:

⁸ Cage M., Why Iran's Assembly of Experts election is the real race to be watching, Sabet F., The Washington Post, <https://www.washingtonpost.com/news/monkey-cage/wp/2016/02/24/why-irans-assembly-of-experts-election-is-the-real-race-to-be-watching> (հասանելի է՝ 25.02.2016):

⁹ Bezhan F., Leaked Video Of Khamenei Raises Questions About Iran's Supreme Leadership <https://www.rferl.org/a/iran-khamenei-leaked-video-1989-questions-leadership/28969517.html> (հասանելի է՝ 29.03.2021):

¹⁰ Տե՛ս նույն տեղում (հասանելի է՝ 29.03.2021):

Իրանցի լրագրող Շահեդ Ալավին, որն առաջինն էր վերոնշյալ տեսանյութը ներբեռնել համացանցում, Radio Farda-ին տրված իր հարցազրույցում նշում էր, որ դրա հիմնական նպատակը Իրանում հակակառավարական այիթին խթանելն էր և ԻԻՀ Հոգևոր առաջնորդին վարկաբեկելը հանրության աչքում: Շ.Ալավին ակնարկել է, որ այդ տեսագրությունն իրեն ուղարկել է ԻԻՀ վերնախավից ինչ-որ մեկը: Արդոյիսասան Բանիսադրը, ով ԻԻՀ առաջին նախագահն էր, մեկնաբանելով ստեղծված դրությունը, նշել է, որ այդ տեսագրությունը Շ. Ալավիին կարող էր ուղարկել այնպիսի մեկը, ով աշխատում էր ներսում և կապեր ուներ հոգևոր վերնախավում¹¹:

Քաղաքական ակտիվիստ Մահմուդ Դելխասթեն Huffington Post-ի համար 2011թ. գրված հոդվածում նշել է, որ Հ. Ռաֆսանջանին ժողովին է հանձնել իմամ Խոմեյնիի կողմից ենթադրաբար գրված մի նամակ, որում նշված է, որ հաջորդ գերագույն ղեկավարը չպետք է կատարի մեծ այաթոլլահ լինելու սահմանադրական պահանջը: Մ. Դելխասթեն գրել է, որ նախկին նախագահ Ա. Բանիսադրը կասկածել է նամակի ճշգրտության վրա, և այն զննել են ձեռագրերի մի քանի մասնագետներ, որոնք եզրակացրել են, որ այն կեղծել է իմամ Խոմեյնիից շատ ավելի երիտասարդ մեկը, ամենայն հավանականությամբ, նրա որդին: Ֆրանսիական Le Monde թերթի կողմից 1989 թ. հունիսին այս հոդվածի հրապարակումից հետո Փարիզում ԻԻՀ ղեկավարները հանդես եկավ բողոքով և ժխտեց դրա իսկությունը¹²:

Կրոնագետ Մոհսեն Զադիվարը, ով մի շարք ուսումնասիրություններ է հրապարակել այաթոլլահ Ա. Խամենեյի՝ առաջնորդ ընտրվելու վերաբերյալ, առաջ է քաշում այն միտքը, որ Հ. Ռաֆսանջանիի թեկնածությունը որպես հոգևոր առաջնորդ չի քննարկվել, որովհետև նա չէր կարող դա հմտորեն անել, այդ իսկ պատճառով նա պնդում է Ա. Խամենեյի թեկնածությունը, որին դիտարկում էր որպես մանիպուլացիայի թույլ գործիքի¹³:

¹¹ Տե՛ս նույն տեղում (հասանելի է՝ 29.03.2021):

¹² Lipin M., Haghghi B., Iranian Dissidents Say Rafsanjani Legacy Defined by Sinister Acts, https://www.voanews.com/world-news/middle-east-dont-use/iranian-dissidents-say-rafsanjani-legacy-defined-sinister-acts?fbclid=IwAR3k5rs8RJR_rwMmWxsQHf_jkPePGy195O-6v1qLt8e2Ehr90VN-VS_PaUg, (3.03.2021):

¹³ Mihrabānī I., Čira Ĥaminh-i rāhbār šud ū Hašimī nāšud?, (Է. Մեհրաբանի, Ինչու՞ Խամենեյին դարձավ հոգևոր առաջնորդ, իսկ Ռաֆսանջանին՝ ոչ) <https://www.radiofarda.com/a/Iran-leadership-why-khamenei-and-not-rafsanjani/29986610.html?fbclid=IwAR2hn8mL6rmDVdbjOB0pxWygHij5CJstonUC7calk e9HBa3BipgZmSC2sk> (հասանելի է՝ 14.09.2021):

Ինչպես արդեն նշեցինք, 1989 թ. Ա. Խամենեյի ընտրության գործում մեծ ազդեցություն ունեցավ Հ. Ռաֆսանջանին, և այս երկու առաջնորդների հարաբերությունները բավականին ջերմ էին: Հետագայում որոշակի լարվածություն է նկատվում նրանց հարաբերություններում, մասնավորապես, առաջնորդության առաջին տարիներին Ա. Խամենեյին նիստերը վարում էր Հ. Ռաֆսանջանիի հետ համատեղ, սակայն հետագայում նա սկսեց խորհրդակցություններ անցկացնել արդեն իր առանձնատանը և Հ. Ռաֆսանջանին ստիպված էր լինում հանդիպումներին մասնակցելու համար գնալ այնտեղ: Մյուս կարևոր կետը, որը Հ. Ռաֆսանջանին հաշվի չէր առել, իր դիրքի թուլացումն էր ու դրա հետ միաժամանակ՝ Ա. Խամենեյի հեղինակության անը: Հենց այդ շրջանում էր, որ Հ. Ռաֆսանջանին գծագրում էր կրոնական դեկավարության և գործադիր իշխանության տարանջատման իր ծրագիրը¹⁴:

2006 թ. Փորձագետների խորհրդի ընտրությունները ընթացան բավականին լարված մթնոլորտում: Իրենց թեկնածուներին էին առաջադրել ծայրահեղ պահպանողականները՝ նախագահ Մահմուդ Ահմադինեժադիի հոգևոր հայր Մոհամմադ Թաքի Մեսբահ-Յազդին և բարեփոխական, նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին: 2007 թ. Հ. Ռաֆսանջանին ընտրվում է Փորձագետների խորհրդի նախագահ՝ առավելության հասնելով հիմնական մրցակից՝ ծայրահեղ կղերական և Սահմանադրության պահապանների խորհրդի քարտուղար Ահմադ Չաննաթիի նկատմամբ: Խորհրդի 76 անդամներից 41-ը քվեարկում է նրա օգտին¹⁵: Պետք է նշենք, որ հենց այս ընտրություններում էր, որ Սահմանադրության պահապանների խորհուրդն առաջին անգամ թույլատրել էր նաև կանանց և աշխարհիկներին առաջադրել իրենց թեկնածուներին, սակայն նրանք որակագրվեցին, քանի որ չէին համապատասխանում անհրաժեշտ իսլամական չափորոշիչներին¹⁶:

2009 թ. մարտի 10-ին Հ. Ռաֆսանջանին, ստանալով 51 ձայն, վերընտրվում է Փորձագետների խորհրդի նախագահ¹⁷, բայց նույն թվականին Խորհրդի 9-րդ նիստի ժամանակ խորհրդի անդամները իրենց անվստահությունն են հայտնում Հ. Ռաֆսանջանիին, որը

¹⁴ Տե՛ս՝ նույն տեղում (հասանելի է՝ 14.09.2021):

¹⁵ Slackman M., Ex-President Back in Spotlight in Iran, as He Wins Leadership of Council, The New York Times, <https://www.nytimes.com/2007/09/05/world/middleeast/05rafsanjani.html> (հասանելի է՝ 29.03.2021):

¹⁶ Farideh F., The Assembly of Experts, https://iranprimer.usip.org/sites/default/files/Politics_Farhi_Assembly%20of%20Experts_0.pdf (հասանելի է՝ 14.09.2021):

¹⁷ Intihab-i Muğdādān Hašimī Rāfsāngānī bih Rīasāt-i Māğlis-i Hūbrigan https://www.bbc.com/persian/iran/2009/03/090310_op_rafsanjani (հասանելի է՝ 30.03.2021):

աջակցում էր «Կանաչ շարժմանը» և դրա մի քանի անդամներին: Նրանք առաջարկում են Հ. Ռաֆսանջանիի փոխարեն նոր նախագահ ընտրել այսթոլլահ Մոհամմադ Ռեզա Մահդավի Քանիին, որը պահպանողական թևի ղեկավարներից էր և նախկինում զբաղեցրել էր վարչապետի ու ներքին գործերի նախարարի պաշտոնները: Հ. Ռաֆսանջանին իր հերթին, հանդես էր գալիս հայտարարությամբ և ասում, որ հաշվի առնելով իր և Մ. Քանիի տարիների բարեկամությունը, ինքը պատրաստ է հրաժարվել խորհրդի նախագահությունից, եթե Մ. Քանին որոշի առաջադրվել: Ի վերջո Մ. Քանին, ստանալով 60 ձայն, ընտրվում է Փորձագետների խորհրդի նախագահ, և իր ելույթում նշում, որ խորհրդի հետագա աշխատանքներում նա դեմ չի լինի ստանալ Հ. Ռաֆսանջանիի օգնությունը¹⁸:

2011 թ. Հ. Ռաֆսանջանին հրաժարվում է մասնակցել Փորձագետների խորհրդի նախագահի ընթացիկ ընտրություններին: Հ. Ռաֆսանջանին կմասնակցելու ընտրություններին, եթե Գերագույն առաջնորդը չստիպեր նրան գնալ այդ քայլին: Բայց կարելի է ենթադրել, որ իրականում Հ. Ռաֆսանջանին որոշեց չառաջադրվել, որովհետև վախենում էր, որ հնարավոր է չընտրվի: Հ. Ռաֆսանջանիի այսպիսի որոշումը, բնականաբար, էլ ավելի էր ուժեղացնում նրա քաղաքական հակառակորդ Մ. Ահմադինեժադի և նրա կողմնակիցների դիրքերը: Բայց այս անգամ ևս, Փորձագետների խորհրդի նախագահ է ընտրվում ոչ թե Մ. Ահմադինեժադի համախոհներից մեկը, այլ պահպանողական թևի ներկայացուցիչ Մ. Քանին, ում հաջողվում է 86 անդամներից կազմված խորհրդում ստանալ 63 կողմ ձայն¹⁹:

2013 թ. Հ. Ռաֆսանջանին շարունակում էր իր քաղաքական ակտիվությունը և հիմնական հանդիպումներից զատ, սկսում է հանդիպումներ ունենալ նաև Ղոմի առաջնորդարանի ազդեցիկ հոգևորականների հետ: Նա առաջիններից էր, ով հոջաթ-օլ-էսլամ Մեյլեդ Հասան Խոմեյնիին առաջարկեց մասնակցել Փորձագետների խորհրդի առաջիկա ընտրություններին: Այս քայլը, կարելի է ասել, որոշ չափով վախեցրեց պահպանողական թևի ներկայացուցիչներին, որովհետև Ղոմի հոգևորականները, ունենալով հոգևորական բարձր կոչումներ և որակավորում, բնականաբար, առանց որևէ խնդիրների

¹⁸ Rafsanjani Loses Assembly of Experts Chair; Report: Mousavis Still in Home <https://www.pbs.org/wgbh/pages/frontline/tehranbureau/2011/03/rafsanajani-loses-assembly-of-experts-chair-report-mousavis-still-in-home.html> (հասանելի է՝ 29.03.2021):

¹⁹ Farideh F., The Assembly of Experts, https://iranprimer.usip.org/sites/default/files/Politics_Farhi_Assembly%20of%20Experts_0.pdf (հասանելի է՝ 14.09.2021):

կանցնեն Սահմանադրության պահպանների խորհրդի կողմից իրականացվող վերջինգը, և հետագայում շատ հավանական է, որ Փորձագետների խորհրդի կազմը փոփոխությունների ենթարկվեր:

Փորձագետների խորհրդի ընտրությունները կատարվում են 8 տարին մեկ անգամ: Վերջին կազմը ընտրվել է 2016 թ. և հաշվի առնելով գործող հոգևոր առաջնորդ Ա. Խամենեյի տարիքը և հիվանդությունը, կարելի է ենթադրել, որ հենց այս կազմին էր վերապահված ընտրելու նոր Գերագույն առաջնորդին: Չնայած Փորձագետների խորհուրդը ամեն կերպ փորձում էր ընտրություններն իրականացնել գաղտնիության մթնոլորտում, բայց Հ. Ռաֆսանջանին, որն այդ ժամանակ Նպատակահարմարության խորհրդի նախագահն էր, մեծ հաջողությունների հասավ Վեհաժողովի առաջիկա ընտրությունների վրա ուշադրությունը կենտրոնացնելու աշխատանքներում:

Հ. Ռաֆսանջանին որդեգրել էր այնպիսի քաղաքականությունը, որի նպատակն էր բարձրացնել Փորձագետների խորհրդի հեղինակությունը հասարակության աչքերում: Մասնավորապես, մինչ խորհրդի ընտրությունները, «Շարդ-Դեյլի»-ին տված հարցազրույցում Հ. Ռաֆսանջանին ներկայացրել է մինչ այդ երբեք չիրապարակված մանրամասներ, որոնք վերաբերում էին 1989 թ. Ա. Խամենեյի Իրանի հոգևոր առաջնորդի պաշտոնում նշանակվելուն: Հ. Ռաֆսանջանին առաջարկել է նաև Իրանի ղեկավար կազմը Գերագույն առաջնորդից Կառավարման գերագույն խորհրդին փոխանցվելու հնարավորության մասին, որն իրենից կներկայացնեն հատուկ լիազորություններով օժտված հանձնաժողով: Հարցազրույցի ընթացքում Հ. Ռաֆսանջանին նաև նշել էր, որ այս գաղափարը այաթոլլահ Խոմեյնիի մահից հետո ողջունել է նաև Ա. Խամենեյին²⁰: Նմանատիպ հայտարարությունները Հ. Ռաֆսանջանիի հակառակորդներին ստիպեցին կասկածել, որ վերջինս ամեն գնով հակված է կյանքի կոչել իր այդ ծրագիրը, չնայած այն բանին, որ ԻԻՀ Սահմանադրությամբ այդ կառույցը որևէ լիազորություններ չէր կարող ունենալ: Մի շարք ազդեցիկ քաղաքական դեմքեր, որոնք ընտրվել էին Գերագույն առաջնորդի անմիջական հրամանով կամ էլ մաս էին կազմում Ա. Խամենեյի մերձավոր շրջապատի՝ բավականին բուռն արձագանքեցին Հ. Ռաֆսանջանիի՝ նմանատիպ հայտարարություններին:

²⁰ Showdown: 6 Things to Know about Rafsanjani's Confrontations with Conservatives <https://majlismonitor.com/en/2016/01/showdown-6-things-to-know-about-rafsanjani-confrontations-with-conservatives/> (հասանելի է՝ 29.03.2021):

Հ. Ռաֆսանջանին հատուկ ուշադրության էր հրավիրում այն փաստին, որ Փորձագետների խորհուրդը չի կատարում Սահմանադրության 111-րդ հոդվածով իրեն վերապահված հիմնական գործառույթը, ինչն էր՝ Գերագույն առաջնորդի ինստիտուտի վերահսկողությունը: Խորհրդի մի շարք անդամներ անգամ բողոքեցին, որ իրենց իրավունք չեն տալիս վերահսկել մասնավորապես այն ռազմական հաստատությունները, որոնք գտնվում են Հոգևոր առաջնորդի անմիջական վերահսկողության ներքո: Սրան արձագանքեց Դատական իշխանության այդ ժամանակվա ղեկավար Սադեդ Լարիջանին, որի պնդմամբ, Սահմանադրության մեջ չկա հստակ կետ, որը կլիազորի Փորձագետների խորհրդի անդամներին վերահսկել Գերագույն հոգևոր առաջնորդի գործողությունները: Սրան հակառակ հանդես եկան Սահմանադրության պահպանների խորհրդի մի շարք բարձրաստիճան հոգևորականներ և անգամ Խորհրդի գործող նախագահ այաթոլլահ Յազդին, որոնք նշեցին որ Փորձագետների խորհուրդը ի սկզբանե լիազորված է վերահսկել Գերագույն առաջնորդի ինստիտուտը, և որ դա նրա հիմնական գործառույթն ու պարտականությունն է²¹:

Հ. Ռաֆսանջանին առաջարկել էր նաև ստեղծել հատուկ հանձնաժողով, որում ընդգրկված անդամները լիազորված կլինեին ուսումնասիրել հոգևոր առաջնորդի հավանական թեկնածուներին: Հաշվի առնելով հարցի նրբությունը, պահպանողական թևի ներկայացուցիչները կտրականապես դեմ արտահայտվեցին այս առաջարկին, իսկ լրատվական միջոցներն անգամ չլուսաբանեցին այն²²:

Ի վերջո, 2016 թ. մայիսի 24-ին Փորձագետների խորհրդի նոր նախագահ է ընտրվում այաթոլլահ Ահմադ Չաննաթին, ով ստանում է 51 դրական ձայն 86 անդամների կողմից: Ա. Չաննաթին պահպանողական էր և ակտիվ քննադատության էր ենթարկում նախագահ Հասան Ռոհանիի որդեգրած քաղաքականությունը, որը միտված էր վերականգնել հարաբերությունները ԱՄՆ-ի հետ²³: Ա. Չաննաթին շուրջ 28 տարի գլխավորել էր ԻԻՀ Սահմանադրության Պահպանների խորհուրդը և Արևմուտքի հետ հարաբերություններում կոշտ թևի կարկառուն ներկայացուցիչ էր:

²¹ Տե՛ս նույն տեղում (հասանելի է՝ 29.03.2021):

²² Տե՛ս նույն տեղում (հասանելի է՝ 29.03.2021):

²³ Iran hardliner Jannati elected head of Assembly of Experts, BBC News, <https://www.bbc.com/news/world-middle-east-36366595> (հասանելի է՝ 29.03.2021):

Այսպիսով, ամփոփելով բոլոր փաստերը, կարելի է եզրակացնել, որ Այի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի քաղաքական կյանքի վերելքներն ու վայրէջքները սերտ կապ ունենին նրա՝ Փորձագետների խորհրդում ունեցած ազդեցության տատանումներով: Իրանում Իսլամական հեղափոխությունից հետո Հ. Ռաֆսանջանին, ով այդ հեղափոխության հիմքերից ու գլխավոր դերակատարներից էր և մեծ ժողովրդավարություն ու հեղինակություն էր վայելում, կարողացավ շատ կարճ ժամանակահատվածում իր ձեռքում կենտրոնացնել իշխանական համակարգի մի շարք կարևոր պաշտոններ և դրանք, բնականաբար, ծառայեցնել իր իսկ շահերի իրագործմանը: Հ. Ռաֆսանջանին ղեկավարեց Իրան-իրաքյան պատերազմում Գլխավոր շտաբի ղեկավարի պաշտոնը, երկու ժամկետներով ընտրվեց ԻԻՀ նախագահի պաշտոնում, գլխավորեց Նպատակահարմարության խորհուրդն ու նախագահեց Փորձագետների խորհրդում: Նա Իսլամական հեղափոխության խորհրդանիշներից մեկն էր ու դրա սերմանած արժեքների կրողը: Չնայած Հ. Ռաֆսանջանիի անունը գուգորդվում էր բռնությունների, սպանությունների, կաշառակերության և քաղաքական դիրքի չարաշահման պատմությունների հետ, այնուամենայնիվ, անուրանալի է նրա ունեցած դերակատարումն Իրանի Իսլամական հեղափոխության կայացման և հետագայում մի նոր քաղաքական համակարգի ձևավորման գործում: Նրա բացառիկ խելքն ու հավատարմությունը հեղափոխական գաղափարներին եղան այն հենարանը, որով նա կառուցեց իր քաղաքական իմիջը և մարմնավորեց հեղափոխության համակողմանի կերպարը:

Ընդհանուր առմամբ, Հ. Ռաֆսանջանիի քաղաքական կյանքի վախճանն առավելապես կապված էր նրա՝ քաղաքական լծակերն ի հաշիվ սեփական հարստության օգտագործելու հանգամանքով: Սա պարզ երևաց 2005 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, երբ իրանցիները իրենց ձայնը տվեցին պոպուլիստ Մ. Ահմադինեժադին, որովհետև Հ. Ռաֆսանջանիի անունը ասոցացվում էր կաշառակերության հետ: Նրան չսատարեց նաև Ա. Խամենեին, որով հստակ ի հայտ եկան գոյություն ունեցող տարածայնությունները նրանց միջև: Հ. Ռաֆսանջանին քննադատեց 2009 թ. նախագահական ընտրություններում Մ. Ահմադինեժադի հաղթանակը և «Կանաչ շարժման» առաջնորդներից դարձավ:

Ա. Խամենեին որոշեց ամբողջապես սատարել Մ. Ահմադինեժադին՝ փաստորեն խեղդելով Հ. Ռաֆսանջանիին և նրա բողոքները: Ավելի ուշ, Հ. Ռաֆսանջանին թերացավ Փորձագետների խորհրդում բավականաչափ չափավոր հոգևորականներ

մորիլիզացնելու ջանքերում, որը նրան հնարավորություն կտար ճնշումներ գործադրել Ա. Իսամենեիի նկատմամբ և հետընտրական գիշումներ պարտադրել վերջինիս: 2011 թ. Հ. Ռաֆսանջանին ստիպված եղավ հեռանալ Փորձագետների խորհրդի նախագահի պաշտոնից, քայց մնաց որպես Նպատակահարմարության խորհրդի ղեկավար:

Հ. Ռաֆսանջանիի մահվան կապակցությամբ «Ազատություն» ռադիոկայանին էլեկտրոնային փոստով ուղարկված հայտարարության մեջ Մերձավոր Արևելքի Human Rights Watch-ի տնօրեն Սառա Լիա Ուիթսոնը ասել է, որ չնայած Հ. Ռաֆսանջանին երբեք իր անունը չի մաքրել մարդու իրավունքների ոտնահարման հարցերից, «նա մահացավ ավելի մեծ հարգանքով, քան ունեցել էր իր ակտիվ քաղաքական գործունեության շրջանում»²⁴:

Այսիսով, Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին, 1989 թ. օգտագործելով իր ազդեցիկությունը, կարողանում է առաջադրել Ալի Իսամենեիի թեկնածությունը հոգևոր առաջնորդի պաշտոնում: Նրա նպատակն էր Ա. Իսամենեիի «ձեռքերով» կառավարել պետությունն ու հող նախապատրաստել իր հետագա ընտրության գործում: Բայց, ինչպես ցույց տվեց կյանքը, երբեմն հաշվարկները իրենց չեն արդարացնում կամ, ինչպես այս դեպքում, Ա. Իսամենեին այդ հաշվարկները կարողացավ օգտագործել ի շահ սեփական քաղաքական կերպարի ձևավորման ու ամրապնդման:

РОЛЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ АЛИ АКБАРА ХАШЕМИ РАФСАНДЖАНИ В СОВЕТЕ ЭКСПЕРТОВ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ ИРИ

Наре Геворгян
(Резюме)

В Иране 1975 года положила начало новой теократической системе, у истоков которой стояли основатели революции и те, кто ее реализовали. Одним из таких религиозных и политических деятелей был Али Акбар, которому было отведено играть ключевую роль в серьезнейшем деле формирования и развития новосозданного государства.

²⁴ Esfandiari G., What Rafsanjani takes to his Grave, <https://www.rferl.org/a/iran-rafsanjani-secrets-he-takes-to-the-grave/28224008.html?fbclid=IwAR1OW11erhIE8kz1zLM2epXSwtLbk7KcFFI9DQA36rSQgebCEBk8kmAQFR4> (հասանելի է՝ 7.04.2021):

В числе должностей, занимаемых в различных институтах системы государственного управления ИРИ, Рафсанджани долгие годы руководил, которому поручено назначить духовного лидера ИРИ. Он сильно повлиял на процесс избрания духовным лидером, после чего, однако, постепенно его авторитет в этом совете стал снижаться. С этой точки зрения необходимо понять, что связывало этих двух иранских лидеров и, в дальнейшем, какие события стали причиной превращения их давней компании в конкуренцию.

THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN

Nare Gevorgyan
(Summary)

In Iran in 1979 marked the beginning of a new theocratic system, actualized by the founders of the revolution and those who implement it. One of such religious and political figures was Ali Akbar, who was assigned to play a key role in the most essential task of forming and developing the newly created state.

Besides the positions held by Rafsanjani in various institutions of the public administration system of the IRI, for many years he also led the which was entrusted with appointing the supreme leader of the IRI. He greatly influenced the process of electing as the supreme leader, after which, however, his authority in this council began to gradually decline. From this point of view, it is necessary to understand what connected these two Iranian leaders and eventually what events caused the transformation of their long-standing friendship into a competition.